ԼՃԱՇԵՆԻ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վ. Վ. ԱՎԵՏՅԱՆ

Հայաստանի տարածքում պահպանվել են հարյուրավոր բերդ-ամրոցների մնացորդներ, որոնց գերակշիռ մասը կառուցվել է նախապատմական ժամանակ, ամրացվել ու ընդլայնվել Վանի թագավորության հզորացման շրջանում։ Դրանցից մի քանիսն իրենց նշանակությունը չեն կորցրել մինչև ուշ միջնադար։

Հայաստանի ու նրա հարևան երկրների կիկլոպյան ամրոցների ուսումնասիրություններից պարզվում է, որ դրանց լայն տարածման շրջանը մ.թ.ա. II հազարամյակն է[1]։ Մեծ թիվ են կազմում հատկապես միջին և ուշ բրոնզի, ինչպես նաև վաղ երկաթի դարաշրջանների ամրոցները, որոնցից հարյուրներով են հայտնաբերվել Հայաստանի և Անդրկովկասի տարածքներում և մասամբ ուսումնասիրվել վերջին երեք տասնամյակներում։

Սևանի ավազանի ամրոցների ու հին բնակավայրերի վերաբերյալ անցյալ դարավերջին արժեքավոր տեղեկություններ է հայտնել Մեսրոպ Սմբատյանցը[2]։ Սևանի ավազանում պեղումներ կատարելուց բացի Ե. Լալայանը 1905—1908 թթ. զբաղվել է նաև տեղի ամրոցների ուսումնասիրությամբ[3]։

1927 թ. Թ. Ավդալբեկյանը Նոր Բայազետի (Կամո) «Բերդի գլուխ» կոչված ամրոցում սեպագիր արձանագրություն հայտնաբերելու կապակցությամբ չափագրել է Բերդի գլուխ և Արծվաքարի կիկլոպյան ամրոցներն ու տվել նրանց հակիրճ նկարագրությունը[4]։ 1930-ական թվականների սկզբներին Ա. Հաչյանը, Բ. Պիոտրովսկին, Լ. Գյուզալյանը, իսկ 1931 թ. նաև Ի. Մեշչանինովը զբաղվել են Արադածի հարավարևմտյան լեռների և Սևանի ավազանի որոշ ամրոցների ուսումնասիրությամբ, որի հիման վրա դրանք դասակարգվել են ըստ տեսակների ու ժամանակների[5]։ Կամոյի շրջանի ամրոցներն ուսումնասիրել և տեղագրական քարտեզ է կազմել նաև Ս. Բարխուդարյանը[6]։

Գ. Մելիքիշվիլին, քննելով Հայաստանի սեպագիր արձանագրությունները, միաժամանակ անդրադարձել է Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցների տեղադրման հարցին[7]։ Հ. Մնացականյանը պեղել է Լճաշենի կիկլոպյան ամրոցի միջնաբերդն ու դրան կից չորս տասնյակի հասնող կացարանները[8]։ Արժեքավոր են նաև Գ. Միքայելյանի ուսումնասիրությունները։ Նա Սևանի ավա-

---

1 С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении. Ереван, 1976; Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975 և այլն։

2 Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գավառի, որ այժմ Նոր Բայազետի գավառ կկոչէ, Ս. Վաղարշապատ, 1895։

3 Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1935։

4 Թ. Ավդալբեկյան, Նոր Բայազետի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը (Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր, Երևան, 1935, № 2)։

5 И. И. Мещанинов, Циклопические сооружения (Известия Государственной академии Института материальной культуры (ИГАИМК), 1932, XIII, 4—7).

6 Ս. Բարխուդարյան, Նյութեր Հին Հայաստանի պատմության, հ. 1, Երևան, 1935։

7 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1969, с. 265—287.

8 Հ. Հ. Մնացականյան, Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական էտապները (Պատմա-բանասիրական հանդես, այսուհետև՝ ՊԲՀ, 1965, № 2, էջ 99—115)։

զանում հետազոտել է 57 ամրոց և փորձել դրանք բաժանել ժամանակագրական խմբերի[9]։ Մենք նույնպես զբաղվել ենք Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցների ուսումնասիրությամբ և հանդես եկել Լճաշենի, Մեծամորի և Սևանա թերակղզու կիկլոպյան ամրոցներին նվիրված գիտական հոդվածներով[10]։

Չնայած այս ամենին, մինչև օրս կիկլոպյան ամրոցների վերաբերյալ չկան ամփոփ ու սպառիչ ուսումնասիրություններ։ Արդ փորձենք այդ բացը թեկուզ մասամբ լրացնել Սևանի ավազանի ամրոցաշինության, հատկապես Լճաշենի կիկլոպյան ամրոցի համալիրի գիտական նկարագրությամբ։

Լճաշենի կիկլոպյան ամրոցի համալիրում նկատելի են ամրոցաշինության զարգացման երեք հիմնական փուլեր, ինչը հաստատվում է շինարարական արվեստի կիրառման ձևերով և նյութական մշակույթի տվյալներով։ Այս ամրոցը պաշտպանական ամրություններ մի հզոր համալիր-կառույց է, որի հետ կապված են եղել ինչպես մոտակա՝ Մեծամորի, Սևանա թերակղզու, Լճաշենի, այնպես էլ հեռավոր՝ Կամոյի շրջանի Բերդի գլխի, Մրթպի ձորի, Այծվաքարի, Մարտունու շրջանի Ծովինարի, Լանջաղբյուրի, Ջորագյուղի և բազմաթիվ այլ ամրոցներն ու պաշտպանական շինությունները։

Լճաշենի կիկլոպյան ամրոցը զբաղեցրել է ավելի քան 50 հա տարածություն։ Այն ներառել է տասնյակ մեծ ու փոքր բլուրներ, ձորակներ, ժայռեր ու քարակույտեր, շրջափակվել է մի քանի պարիսպներով, որոնց ընդհանուր երկարությունը հասնում էր շուրջ 5 կմ-ի[11], իսկ արտաքին պարսպինը՝ 3 կմ-ի։ Միջնաբերդը զբաղում էր 1 հա տարածք և արտաքին բնակավայրերի հետ կապված էր երկու գլխավոր, երեք երկրորդական ճանապարհներով։ Միջնաբերդի արևելյան և հարավարևմտյան կողմերն ունեցել են կրկնակի և եռակի պարիսպներ, որոնց կանգուն մնացած մասերի բարձրությունը հասնում էր 3—4, տեղ-տեղ՝ 5—7 մ-ի։

Ամրոցը բարդ կառուցվածքի է, հատկապես իր «թակարդ» պարիսպների համակարգով։ Միջնաբերդից բացի, ամրոցն ունեցել է 22 մեծ ու փոքր քարաբուրգեր և աշտարակներ։ Պարիսպները շարված են բազալտե անտաշ զանգվածեղ քարերով, որոնցից շատերը կշռում են 3,5—6 տ.։ Այն մասերում, որտեղից սպասվել է թշնամին, շարվել են կրկնակի հաստ պարիսպներ, որոնց լայնությունը հասնում է 5—6 մ։ Ամրոցի պաշտպանությունն ավելի հուսալի դարձնելու համար ամենաբարձր բլուրների վրա կառուցվել են հզոր քարաբուրգեր և առանձին դիտակետեր, որոնց շուրջը գոգավորող պարիսպները տեղ-տեղ կրկնակի են։

Լճաշենի կիկլոպյան ամրոցը Սևանի ավազանի մյուս ամրոցների նախատիպն է և ունեցել է ռազմավարական կարևոր նշանակություն։

Հանրահայտ է, որ հնագույն և դրանց նմանությամբ հետագա ժամանակների ամրոցները դրեթե առանց բացառության կառուցվել են բնական ապահով վայրերում, շրջապատի նկատմամբ բարձրադիր տեղերում՝ բլուրների կամ բարձունքների վրա, ձորափերին և այլն։ Մեհավանդ բլրալանջերի ու լեռնալանջերի կառույցների համար քարեր ու այլ ծանրություններ բարձրացնելու ժամանակ օգտագործվել են հատուկ հարմարանքներ, որոնցից մեկն անվանել ենք «լծակ»[12]։ Նման լծակներ ու այլ սարքավորումներ են

---

9 Գ. Հ. Միքայելյան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968։

10 Վ. Վ. Ավետյան, Լճաշենի կիկլոպյան ամրոցը (Սովետական մանկավարժ, 1967, № 6, էջ 44—47), նույնի՝ Մեծամորի կիկլոպյան ամրոցը (Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», 1967, № 2, էջ 180—190)։

11 Վ. Վ. Ավետյան, Լճաշենի կիկլոպյան ամրոցը, էջ 44—48, Գ. Հ. Միքայելյան. նշվ. աշխ., էջ 13—15։

12 Վ. Վ. Ավետյան, Նոր հուշարձաններ Աղջիի ձորից (Հայկական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտական գիտական աշխատանքների ժողովածու, Երևան, 1967, № 2, էջ 231—239)։

օգտագործվել նաև Լճաշենի կիկլոպյան ամրոցի շինարարության ժամանակ։ Սակայն կառուցման գործում վճռականը եղել է տվյալ համայնքի, իսկ հետագայում նաև գերիների, գուցե և ստրուկների, ուժը։

Լճաշենի ամրոցի պարսպապատերի մնացորդները և ամրոցից պեղված նյութերը որոշակի հիմք են տալիս դատելու այդ պաշտպանական համալիրի կառուցման և անկման ժամանակի մասին։ Ամրոցի արևելյան և հարավ-արևելյան կողմերում մինչև այժմ պահպանված են պատերի նախնական շարքերը, որոնց բարձրությունը տեղ-տեղ հասնում է 3 մ-ի։ Սրանք միաշար ահռելի ժայռաբեկորներ են, որ իրար վրա դնելու և դրսից չհարգարելու հետևանքով հսկայական խոռոչներ են առաջացել։ Խոռոչների բացվածքը հաճախ անցնում է 70 սմ-ից։ Դրանք խցանված չեն մանր քարերով։ Անկախ դրանց դիրքից՝ վերև են բարձրացած թե թեքված, չեն ուղղվել տակը մանր քարեր դնելու եղանակով։ Քարը սկզբից ինչպես հաջողվել է դնել, այդ դիրքով էլ թողել են, հավանաբար ծանրության պատճառով ուղղել չկարողանալով։

Այս կառուցածքի պարիսպը ժամանակագրականորեն աղերսվում է ամրոցում պեղված № 8գ սենյակի ստորին շերտերի և ամրոցից արևմուտք (գոմերի մոտ) պեղումներով հայտնաբերված նյութերի հետ։ Այդ նյութերը և՛ փայլով կամ անփայլ, կիսագնդաձև կանթերով տարբեր ձևերի կավամաններ բեկորներ են, որոնք ժամանակագրվում են մ. թ. ա. III հազ. առաջին կեսով[13]։ Սրանց հետ գտնվել է քարե փոքր սանդ՝ շրջանաձև խոռ փոսիկով, որը Մաշտոցի բլուրի սանդի[14] կրկնությունն է։ Այս տիպի սանդերը հնչել են՝ շարժական և փոխադրվել են տեղից-տեղ։ Հայտնաբերվել են նաև աղորիքներ, սանդակոթեր, կոկիչներ և քարե այլ գործիքներ։ Աղորիքները որձաքարից են, ունեն մակույկի տեսք և նման են Ջուջևանի ջաղացատեղի, Շիրակի դաշտի, Գառնիի ու այլ վայրերի մ. թ. ա. III հազարամյակի գտածոներին[15]։

Լճաշենի ամրոցի պարսպապատերի առանձին հատվածների ժամանակագրման հիմք են միջնաբերդի արևելյան կողմում շերտագրված նյութերը։ Բացվել են նյութական երկու հզոր շերտեր։ Մշակութային շերտերից հայտնաբերված նյութերը ուշագրավ են և բնորոշ մ. թ. ա. III—II հազարամյակներին։

Լճաշենի մշակույթի զարգացման երկրորդ փուլը վերաբերում է մ. թ. ա. II հազ. կեսերին։ Ինչպես երևում է, այդ շրջանում ամրոցի պարիսպն ընդարձակվել է և օղակել ամենաբարձր բլուրը, որի վրա գտնվում է միջնաբերդը։ Այս փուլի որմնաշինության մնացորդները պահպանված են միջնաբերդի արևմտյան կողմում՝ հատվածաբար, մեկը մյուսից շուրջ 20 մ հեռավորության վրա, ըստ որում՝ միջնաբերդի մոտակա հատվածը հարավից-հյուսիս ձգվում է շուրջ 20 մ երկարությամբ, իսկ մյուս հատվածը՝ արևմուտքից-արևելք 15 մ երկարությամբ, 4—5 մ բարձրությամբ։

Այստեղ պարսպապատերի քարերը նույնպես խոշոր են, անտաշ, բայց նախորդի համեմատությամբ ավելի «հարթ» մակերեսներով։ Պատաշարի դրսի երեսներին առաջացած խոռոչները տեղ-տեղ խցանված են մանր քարերով։ Պատերը կառուցված են թեք լանջերին, իրար վրա դարսված ժայռաբեկորներով, որոնք միաշար են և լիցք չունեն։

Թ. Թորամանյանը շինարարական այս երկրորդ շրջանը բնութագրել է հետևյալ կերպ. «Կան նաև պատեր և պարիսպներ, որոնք թեև մեծազանգ-

---

13 Հ. Հ. Մնացականյան, նշվ. հոդվ., էջ 95։

14 Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 171։

15 С. А. Есаян, նշվ. աշխ., էջ 20, աղ. 7, նկ. 11, 12։ Т. С. Хачатрян, նշվ. աշխ., էջ 47, 48, նկ. 11—12։ Է. Վ. Խանդադյան, Գառնի (1949—1966 թթ. պեղումների արդյունքները), Երևան, 1966, էջ 23 և հաջորդները, Նույնի՝ Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, աղ. 4։

ված քարերով անշաղախ շինված են, սակայն փոքր ի շատե հառաջադիմություն են ցույց տալիս որմնաշինության մեջ։ Հիրավի, դարձյալ քարերի կարգ չկա, այնուամենայնիվ, նախընթաց շրջանի նման կուտակումներ չեն։ Անկանոն ձևով քարերի իրարու վրա դնելու մեթոդը մնաց, առաջ եկած դատարկությունները ըստ հնարավորության, փոքր քարերով լցված են»[16]։ Այս տեսակետը հատկապես Լճաշենի ամրոցի երկրորդ շրջանի համար լիովին ընդունելի է։ Թ. Թորամանյանի նկարագրությունը միանգամայն համընկնում է Լճաշենի ամրոցի կառուցողական ոճին, որմնաքարերի ծավալին, պատերի ուղիղ և անհարթ մակերեսներին կամ խոռոչներին, ինչպես և քարերի դասավորությանը։

Լճաշենի համալիրի պարսպապատերը և ամրոցի տարածքը շատ ավելի մեծ ծավալի են հասնում ու ընդգրկվում Վանի թագավորության շրջանում։ Ինչպես երևում է, բիայնաբիների նվաճումից հետո Սևանի ավազանի համար կարևորվել է այս ամրոցի ռազմավարական դերն ու նշանակությունը։ Թերևս այդ է պատճառը, որ գոյություն ունեցող համեմատաբար փոքր տարածքի ամրոցն ընդգրկվում է, նրա նոր պարիսպները հնի համեմատությամբ ձգվում են հարյուրավոր մետրերով։ Այժմ արդեն պատաշարերի մեջ հանդիպում են հարդարված հակատներ։ Պարսպապատերը երկշարք են (դրսից և ներսից), պատի մեջ կա անշաղախ լիցք (ավելի մանր քարերով)։ Պատերը լարաշար են, ուղիղ ձգված, ունեն ուղիղ անկյուններ և կարևոր տեղերում՝ աշտարակներ։ Պատերի հաստությունը տեղ-տեղ հասնում է 3 մ-ի, իսկ աշտարակներինը՝ 5—5,5 մ-ի։ Որոշ տեղերում, առանձնապես հարավային կողմում, կանգուն մնացած պարսպապատերի բարձրությունը հասնում է 7 մ-ի, ավերակված տեղերում՝ 0,3—1 մ-ից ոչ պակաս։

Ամրոցի պարսպապատերի այժմյան պահպանված մնացորդները պարզորոշ դաղափար են տալիս դրանց հսկայական ծավալի մասին։ Քարերը վերցված են տեղի հրաբխային բազալտի անսպառ պաշարներից, որոնք սփռված են հենց պարսպապատերի տակ ու դրանցից ոչ հեռու։ Ի դեպ, ահռելի չափերի հասնող այս քարակույտերը նույնպես լուրջ արգելք են եղել ամրոցի վրա հարձակվող թշնամու համար։ Դրանք տեղ-տեղ մինչև 300 մ լայնություն ունեն և դժվարանցանելի են։

Այսպիսով, պարսպապատերի կառուցման հաջորդական ընթացքին հետևելու դեպքում ակնառու է դառնում Վանի թագավորության շրջանում ընդարձակված պարիսպը։ Այս վերջին շրջանին է վերաբերում նաև միջնաբերդն իր պարիսպներով։ Ամրոցի պարսպապատերի համեմատությամբ միջնաբերդի պատերի քարերը ավելի փոքր ծավալ ունեն, որոշ չափով մշակված են. իսկ միջնաբերդի գլխավոր մուտքի անկյունաքարերից շատերի հատակները կանոնավոր տաշված ու հարթված են։

Միջնաբերդն ունեցել է երկու գլխավոր մուտք, որոնցից արևմտյանը փակվել է, իսկ հյուսիսարևմտյանը՝ պահպանվել։ Դեպի միջնաբերդ բերող հատուկ լայն ճանապարհը կառուցվել է ելումուտ անող ռազմակառքերի ու հեծյալների համար (ինչ խոսք, այլ փոխադրամիջոցները նույնպես կարող էին մտնել միջնաբերդ)։ Գլխավոր մուտքերի աջ և ձախ կողմերում միջնաբերդն ունեցել է աշտարակներ։ Թվում է, այս միջնաբերդը և երրորդ անգամ ընդարձակված պարիսպը վերաբերում են այն ժամանակին, «...երբ պատի շարքի քարերը համեմատաբար փոքրանում են, քարերի վրա երևում են քանակուսելու և լարաձիգ ուղղությամբ պատի մեջ շարելու ճիգեր»[17]։

Լճաշենի ամրոցաշինության վերջին փուլը Վանի թագավորության հզորացման ժամանակաշրջանին առնչելը փաստարկված է նաև նրանով, որ միջնաբերդի ավերակներում պեղումներով հայտնաբերվել են Վանի թագավո-

---

16 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան 1942, էջ 13։

17 Նույն տեղում։

բության մշակույթին բնորոշ նյութեր՝ կարմիր փայլով խեցեղեն և երկաթե իրեր։

Ամրոցի գոյության բոլոր շրջաններում պարսպի և՛ ներսում, և՛ դրանից դուրս անընդհատ բնակություն է եղել, որովհետև պարսպի հարավային, հարավարևմտյան և առավելապես արևմտյան կողմերում մինչև այժմ մնացել են հնագույն շենքերի հիմքեր։ Դրանցում պահպանված հիմնապատերի բարձրությունները հասնում են 0,2—1,5 մ-ի։

Պարսպի պատերից դուրս միայն հետազոտական բնույթի պեղումներ են կատարվել։ Այստեղ պեղված կացարանների չափերը տատանվում են 3—6, 2—3,7 մետրի միջև։ Թեև կացարանների ավերակները երբեմն մեկուսացված են շրջապատից, բայց ընդհանուր առմամբ իրար մոտ են և տեղավորված են մանր ու մեծ բլուրների գագաթներին, սարալանջերին և որոշ չափով հարթ տարածությունների վրա։ Երբեմն իրար մոտ հանդիպում են ավելի մեծ կացարաններ՝ անկանոն անկյուններով։

Ամենից ուշագրավը պարսպի ներսի հարյուրավոր կացարանների մնացորդներն են։ Այստեղ պեղված և չպեղված շենքերի ավերակներն այնքան շատ են և խառնված, որ դժվար է որոշել դրանց թիվը, քանզի բնակությունը եղել է խիտ, և ամեն պիտանի մակերես օգտագործվել է։ Միջնաբերդի դիմացի (դեպի արևմուտք) լանջերին մինչև այժմ պահպանված են շինությունների իրար խառնված մնացորդներ։ Փոքրիկ, բայց խիստ ժայռոտ բլուրների գագաթները նույնպես բնակեցված են եղել։ Բնական ժայռերի մեջ ընտրելով նվազագույն հնարավորությունն անգամ, նրանք մեկ կամ մի քանի կողմից կացարաններին իբրև պատ հարմարեցրել են բնական ժայռերը, իսկ մյուս կողմերից կառուցել են պատեր, ծածկել ու դարձրել կացարան։ Այս բնույթի կառույցների թիվը հասնում է (այժմ տեսանելի՝ պեղված և չպեղված վիճակում) 33-ի։ Ամրոցի ներսում տափարակ գագաթով ամենամեծ բարձունքի վրա կան 30-ից ավելի մեծ ու փոքր սենյակների մնացորդներ, որոնք գետնի երեսին տեղ-տեղ ուրվագծվում են լրիվ, երբեմն մասամբ, իսկ շատ հաճախ հազիվ են նշմարվում։ Միջնաբերդից հարավ-արևմուտք, երկու ժայռոտ գագաթների միջև եղած թեք հարթության վրա երկու զուգահեռ շարքերով երեվում են խոշոր քարերով շարված քառակող շինությունների հիմքեր։ Ավելի գոգավոր և քարից համեմատաբար ազատ տարածությունների վրա, միջնաբերդից արևմուտք և հյուսիս-արևելք, պահպանված են շրջանաձև, խոշոր ծավալի կացարանների հիմքեր, որոնցից ամենամեծի տրամագիծը հասնում է 11 մ-ի։

Այս գոգավոր և «քարազուրկ» տարածության հարավարևմտյան եզրին պեղվել է ընդարձակ կացարաններից մեկը, որի պատերի հաստությունը հասնում է 1,8 մ-ի։ Իսկ շարքերի քարերը խոշոր ժայռաբեկորներ են։ Պատի մեջ անշաղախ լիցք է։ Կացարանի ճակատի պատը ձգվում է արևելքից արևմուտք՝ հարավարևելյան թեքումով, երկարությունը 21 մ է, կանգուն մնացած պատերի բարձրությունը, կացարանի հատակից հաշված, 2,6 մ է, կացարանի հյուսիսարևելյան անկյունը կիսակոր է, մնացածները՝ ուղիղ։ Կացարանը հաստ միջնապատով բաժանվում է երկու անհավասար մասերի, ըստ որում, փոքրը՝ արևելյան, մեծը՝ արևմտյան կողմերում։ Երկու սենյակների հատակը բնական ժայռ է և հատակից տեղ-տեղ բարձր է 0,8—1 մ։

Ուշագրավ են այս կացարանից հայտնաբերված նյութերը։ Վերին շերտերում, մոտ 1 մ խորության մեջ հայտնաբերվել են կավամանների հարյուրավոր բեկորներ, որոնք իրենց գույներով, կավի որակով, թրծման աստիճանով, զարդամոտիվներով համապատասխանում են Լճաշենի մեծ դամբարանաբլուրներից (մ. թ. ա. XIV—XIII դդ.) հայտնաբերված խեցեղենին։ Ներքին շերտերում հայտնաբերվածներն ավելի վաղ շրջանի հետ են կապվում։ Երկու շերտերում գտնված խեցեղեն բեկորների ընդհանուր թիվն անցնում է 2000-ից։ Մոտավորապես նույնքան են խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորների մնացորդներ։

Ամրոցի ներսում պահպանված կացարանները երեք հիմնական ձևի են՝ շրջանաձև (հինը), անկանոն անկյուններով (միջին զարգացման շրջան) և քառակող (ուշ շրջան), բայց նշված տիպերը հաճախ խախտվում են։ Սրանց կառուցապատման քարերը նույնպես միատեսակ չեն։ Վաղ շրջաններին պատկանող շրջանաձև կացարանների պատաքարերը անհամեմատ մեծ են ու վատ շարված, միջին շրջաններին պատկանող պատերինը, առաջինի համեմատությամբ՝ փոքր, ուշ շրջանների կացարանների պատերի քարերը շատ ավելի փոքր են, հարթ մակերեսով, սենյակներն ուղիղ անկյուններ ունեն և փոքր ծավալ։

Հաճախ վաղ շրջանի կացարանների քարե հիմնապատերը գրված են մայր հողին, իսկ մի մասի համար հիմք են ծառայում բնական քարաշերտերը։ Օրինակ՝ այս շրջանի № 18 սենյակում հատակի մի մասը բնական ժայռ է, մյուս մասը՝ արհեստական սալահատակ է, թեև՝ անհարթ։ Այս փոքր և անկանոն սենյակի արևելյան ճակատի պատից, ուր և մուտքն է, 15 սմ հեռավորության վրա 20—25 սմ յայնքով առվակ է փորված, որի կողքերից շարված են մանր քարեր՝ ծածկված սալաքարերով։ Վերջիններս միաժամանակ սենյակի հատակի մի մասն են կազմում։ Այս սենյակից գտնված խեցեղենի բեկորները շագանակագույն են կամ մուգ սև փայլ ունեն։ Նախշազարդերը խորաքանդակ են։

Շրջանաձև սենյակներից մեկում (№ 11) մեկ ու կես մետր խորությունից հետո պատերը ավարտվում են։ Սենյակի վերին շերտում գտնվել են խեցեղենի անզարդ և գծազարդ բեկորներ, իսկ ստորին շերտում, քարե պատերի հիմքից ցած, հայտնաբերվել են երկու սկահակ, որոնք միանգամայն տարբերվում են վերին շերտի խեցեղենի տիպերից։ Սրանց պատերը հաստ են, արտաքինից վատ հարդարված, մեկի շուրթը տափակ է, ալիքաձև գծերով զարդարուն, շուրթի տակ սրածայր վեց ելուստներ են արված, հիմքերը հավասարեցված են շուրթին։ Երկրորդ սկահակը նույնատիպ է, սև, բարձրությունը՝ 19,5, բերանի տրամագիծը՝ 16, իրանինը՝ 13 սմ։ Այն իրանի վերին մասում ունի երեք խումբ սրածայր ելուստներ (յուրաքանչյուր խմբում՝ չորսը), կավն անմաքուր է, պատերը հաստ, շուրթը դեպի դուրս լայնացող։ Ներսի մեջ գտնվել է երկու սրոցաքար, մեկ անվակ, մեկ կոկիչ։ Ինչպես երևում է, № 11 սենյակի վերին շերտի խեցեղենը նման է վաղ բրոնզեդարյանին, իսկ ստորին շերտի կավանոթները պատրաստման տեխնիկայով և նմանությամբ կարելի է դասել էնեոլիթից վաղ բրոնզին անցման շրջանի նյութերի շարքը։ Նշված անոթները որոշակի նմանություն ունեն Մաշտոցի բլուրի, Կողբակ բլուրի և Շենգավիթի կոպիտ, ելուստապատ անոթներին[18]։ Որոշ նմանություններ ենք տեսնում նաև Նախիջևանի[19], Շուլավերի[20] էնեոլիթյան խեցեղենի նմուշների մեջ, որոնք հիմնական հատկանիշներով կուր-արաքսյան մշակույթի յուրատիպությունն են հաստատում։

Արդ, № 11 սենյակի ստորին շերտի նյութերը ժամանակագրում ենք մ. թ. ա. III հազ. սկզբներով։ Սրանց կարող է լրացնել Լճաշենի կիկլոպյան ամրոցից ոչ հեռու բացված № 120 դամբարանի խեցեղենը, որը ըստ Հ. Մնացականյանի, վերաբերում է էնեոլիթից վաղ բրոնզի անցման շրջանին[21]։

Ուշագրավ է 8գ սենյակը։ Այն գտնվում է միջնաբերդում՝ վերևում նողված գլխավոր մուտքի դիմաց։ Սենյակում բացվել է օջախ՝ բուխարի, որն ունի պատի մեջ փորված ծխնելույզ։ Սենյակի վերին շերտում գտնվել են միջնադարյան ջնարակած խեցեղենի բեկորներ և հայկական թոնիր, երկրորդ շերտից՝ մ. թ. ա. X—XII դդ. մշակույթին բնորոշ նյութեր, դերազանցապես

---

18 Археология СССР. Энеолит СССР, М., 1982, с. 159, рис. 4, 5.

19 Նույն տեղում, էջ 155, նկ. 9, 11, 13, 14։

20 Նույն տեղում, էջ 149, նկ. 1—4, 6։

21 Հ. Հ. Մնացականյան, նշվ. հոդվ., էջ 95—114։

գորշ և կարմիր գույնի խեցեղենի բեկորներ։ Երրորդ՝ այրված հողի և մոխրի 1,15 մ հաստության շերտում, հայտնաբերվել են մուգ սև փայլով ասեղնազարդ կամ կետազարդ, կոպիտ պատերով մոխրագույն և կարմիր, անզարդ ու գունազարդ խեցեղենի բեկորներ, մանր ու խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորների մնացորդներ։ Դրեթե ամբողջական ձևով բացվել է սև փայլներկով քառակող, դրսից՝ լայն, մի կողմը կորավուն պատուհաններով առարկա, որի տարատեսակները հանդես են գալիս մ. թ. ա. XV—XIII դդ. խեցեղենի մեջ՝ հրաբորբոք համարվող անոթների հետ և անվանվել են «զոհարան»։ Այս շերտից հայտնաբերված նյութերը թվագրվում են մ. թ. ա. XX—XVI դդ.[22]։

Չորրորդ՝ ստորին շերտում հայտնաբերվել են վաղ բրոնզեդարյան խեցեղենի նմուշներ։ Գտածոների մեջ կա սև գույնի բաժակաձև մի անոթ՝ լայն բերանով ու դեպի հատակը նեղացող իրանով, որն ունի փոքր ու նուրբ կիսագնդաձև կանթ։ Անոթի բարձրությունը 5 սմ է, բերանի լայնությունը՝ 11։ Բացի այդ, հայտնաբերվել են կիսագնդաձև կանթերով, փայլը խամրած խեցեղենի բազմաթիվ այլ նմուշներ, որձաքարե աղորիքներ, ոսկրե գործիքներ, իլիկի գլուխներ։ Սրանք իրենց զուգահեռներն ունեն Շենգավիթի վերին շերտերի, ինչպես և Էլարի, Գառնիի, Քաղսիի, Դիրաքլարի (Կարնուտ) նյութերի մեջ[23]։ Բաժակաձև անոթն իր չափերով, ձևով ու գույնով միանգամայն նման է Թումանյանի շրջանի Լորուտ գյուղի վաղբրոնզեդարյան բնակատեղիից գտնված երկու կավանոթներին[24]։

Այսպիսով, անկասկած է, որ № 8գ սենյակի ստորին շերտի նյութերը վերաբերում են մ. թ. ա. III հազարամյակի առաջին կեսին։

Առավել որոշակի պատկեր են ներկայացնում ամրոցի ընդհանուր շերտագրական նյութերը, որոնք հայտնաբերվել են փորված խրամատի երկու հզոր շերտերից։ Ստորին շերտից հայտնաբերվածների մեջ կան օբսիդիանե և կայծքարե շեղբեր ու քերիչներ, որոնք ունեն նեոլիթյան կնիք։ Այս տիպի գործիքները վաղուց համընդհանուր ճանաչում ունեն և մեծ քանակությամբ տարածված են նորքարեդարյան ժամանակների բոլոր հնավայրերում։

Առավել աչքի է ընկնում խամրած, սև փայլով և բաց շագանակագույն խեցեղենը։ Այն կարելի է բաժանել երեք խմբի՝ 1. հաստ պատերով ու կիսագնդաձև կոպիտ կանթերով անոթներ, 2. հաստ պատերով, անկանթ լայնաբերան անոթներ, 3. բարակ պատերով, կիսագնդաձև նրբակերտ կանթերով և առանց կանթի անոթներ։ Այս կավանոթները զուրկ են մ. թ. ա. III հազարամյակի խեցեղենին բնորոշ փորագիր, բարդ երկրաչափական նախշազարդերից։ Ըստ երևույթին, սրանք տեղական՝ լճաշենյան տարբերակ են, որոնք հետագայում ունեցան զարգացման ուրույն ուղի։ Սակայն ձևով միանգամայն նման են կուր-արաքսյան մշակութային օջախներից հայտնաբերված հանրահայտ խեցեղենին։ Այս բոլորին լրացնում են ամրոցի № 1, 2, 4 կացարանների համանման նյութերը։

Երկրորդ՝ վերին շերտից հայտնաբերվածների մեջ աչքի ընկնող նյութերից են օբսիդիանե և կայծքարե նետասլաքներն ու փոքրիկ շեղբ-ներդիրները։ Նետասլաքներից մեկը եռաթև է, որը Լճաշենի եզակի նմուշներից է։

Բազմաթիվ են նույն շերտից հայտնաբերված խոշոր եղջերավոր անասունների տարատեսակ եղջյուրները, որոնք, հավանաբար, պահվել են գործիքներ պատրաստելու համար կամ ծառայել որպես այդպիսիք։ Դրանց մեջ նաև նաև եղջյուրից պատրաստված սանրատամ մի գործիք և կիսամշակ եղջյուր։ Դեպ, Լճաշենի և ընդհանրապես Սևանի ավազանի հին բնակատեղիներից և դամբարաններից հաճախ են գտնվել եղջերուի եղջյուրներից

22 Նույն տեղում, էջ 104։

23 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 56.

24 Վ. Վ. Ավետյան, Հին հուշարձաններ Լորուտի տարածքում (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, № 8, էջ 113—116)։

պատրաստված տարատեսակ զարդիքներ։ Այս շերտից հայտնաբերված նյութերի մեջ մեծ թիվ է կազմում խեցեղենը՝ մեծ մասամբ սև փայլաներկով, կետազարդ ու ասեղնազարդ նախշերով, իրար զուգահեռ ալիքաձև փորագրագծերով։ Առավել աչքի ընկնողը կոշկաձև, մի կանթանի գորշ կավանոթն է, որի կանթը վեր է ցցված։ Անոթի ամբողջ մակերեսը պատված է իրար հակադիր եղևնատերև զարդերով, մի զարդամոտիվ, որը բնորոշ է Լճաշենի խեցեղենին։

Լճաշենի ամրոցից հայտնաբերված նյութերը բազմազան են, վերաբերում են պաշտամունքին, կենցաղին, տնտեսության այլևայլ կողմերին՝ անասնապահության, երկրագործությանը, արհեստներին, ռազմական գործին և այլն։ Դրանք համեմատելի են դամբարանային նյութերի հետ՝ ժամանակագրման համար։

Այսպես, վերին առաջին շերտերում գտնված նյութերը գերազանցապես միջնադարյան են։ Միջնադարյան իրերի խմբերում հանդիպում են ածելիների շեղբեր, սրոցաքարեր, հասարակ և ջնարակած կավամաններ, թոնիրների մնացորդներ, կճուճներ, կարասներ, ձևավոր բռնակներով կավե կափարիչներ։

Վերին երկրորդ շերտերում (40—50 սմ խորությամբ) հանդիպում են խեցեղենի բեկորներ, որոնք նման են Կարմիր բլուրի քրեղանների շուրթերին, սափորների կանթերին։ Այս շերտերից սովորաբար ավելի փոքր նյութեր են գտնվում։ Երկրորդ շերտից գտնված առավել աչքի ընկնող իրը նիզակի երկաթե ծայրակալն է։

Խեցեղենի բեկորներով հարուստ է հատկապես երրորդ շերտը, որի հաստությունը տեղ-տեղ հասնում է 1,5—2 մ-ի։ Այստեղից հայտնաբերվել են մեծ քանակությամբ սև գույնի խեցեղենի նմուշներ, որոնք ունեն գծաշարդեր, սեղանաձև ելուստներ, ցանցկեն (հպազարդ) փայլագծեր։ Մեծ թիվ են կազմում շուրթերի ու հատակների բեկորները, որոնցով կարելի է վերականգնել անոթների ձևերը։ Գտնվել են նաև քարե աղորիքների բեկորներ, սանդեր, սանդակոթեր, ոսկրե իրեր, այդ թվում՝ եղջերուի կիսամշակ եղջյուրների բեկորներ։

Լճաշենի ամրոցի և միջնաբերդի կացարանների ստորին շերտերում սովորաբար հայտնաբերվում են սև, թույլ փայլեցված կամ անփայլ խեցեղենի ստորկաններ, որոնցից շատերի վրա պահպանված են կիսագնդաձև նրբակերտ կանթերի տարատեսակներ։

Այսպիսով, եթե հետևելու լինենք Լճաշենի կիկլոպյան ամրոցի պեղումներից և շերտագրությամբ ձեռք բերված նյութերի ժամանակագրությանը, կպարզվի, որ այստեղ կյանքը սկիզբ է առել III հազ. սկզբներին և հարատևել մինչև Վանի թագավորության շրջանը, ներառյալ մ. թ. ա. VII դ.։ Այնուհետև մեզ անհայտ պատճառներով ընդհատվում է նյութական մշակույթը։

Ըստ երևույթին, դրա պատճառը կապված է ինչ-որ աղետի, դուրս և Սևանա լճի ջրերի կտրուկ բարձրանալու հետ։ Բ. Բեկ-Մարմարչևը ճոխարատ ուսումնասիրությունների հիման վրա այն կարծիքն է հայտնել, որ մոտավորապես 2500—3000 տարի առաջ (որը գրեթե համընկնում է մեր նշած թվագրության սկզբին) լճի մակերեսն ունեցել է այն մեծությունը, ինչ որ արհեստականորեն ցամաքելուց առաջ էր[25], այսինքն՝ 1921 քառ. մ.։ Կնշանակի 2500—3000 տարի առաջ լճի ջրերը կտրուկ բարձրացել են և ծածկել բնակատեղիները, այդ թվում դամբարանները, որի հետևանքով բնակիչները կարող էին հեռանալ ավելի ապահով տեղեր և շարունակել իրենց մշակութային կյանքը։

Լճաշենի միջնաբերդում նորից բնակություն է հաստատվում մոտավորապես V դարից։

---

[25] Б. И. Бек-Мармарчев, Многолетняя кривая колебания уровня озера Севан (Известия АН АрмССР, серия физ.-мат. наук 1—4, 1951, № 3, с 200).

К ВОПРОСУ О ДАТИРОВКЕ ЛЧАШЕНСКОЙ ЦИКЛОПИЧЕСКОЙ КРЕПОСТИ

В. В. АВЕТЯН

Резюме

Изучение археологических материалов Лчашенской циклопической крепости свидетельствует о том, что на Армянском нагорье сооружение таких крепостей относится к началу III тысячелетия до н. э. Дальнейшее развитие подобных построек проходило в соответствии с изменениями социально-экономических отношений коренных жителей нагорья.